

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Վանաձորի Օրհուս կենտրոնի
2014 թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին
կատարած աշխատանքների մասին

17.12.2014թ.

2014 թ-ի ընթացքում Վանաձորի Օրհուս կենտրոնը շարունակել է իր առաքելությունը՝ ուղղորդվելով Օրհուսի կոնվենցիայով (տեղեկատվության մատչելիություն, հասարակության ներգրավվածություն որոշումներ կայացնելու գործընթացում և արդարադատության մատչելիություն): Հավատարիմ մնալով իր առաքելությանը հարթակ է հանդիսացել քննարկումների քաղաքացիական նախաձեռնությունների, հանդիպումների ու էկոլոգիական մշակույթի ձևավորման համար, կապող կամուրջ է հանդիսացել հասարակություն-SԻՄ ասպարեզում, հենվելով Օրհուսի կոնվենցիայի երեք հիմնադրույթների վրա՝ նպաստել շրջակա միջավայրի պահպանությանն ու համայնքների կայուն զարգացմանը:

Վանաձորի Օրհուս կենտրոնն այս տարի պաշտոնական գործունեությունն սկսել է մարտի 1-ից, սակայն աշխատանքը և ոչ մի բոպե կանգ չի առել՝ սկսած հունվարի 10-ից: Վանաձորի Օրհուս կենտրոնի աշխատանքն ընթացել է ըստ համակարգողի «Ծառայությունների մատուցման պայմանագրի» հավելված 2-ում հաստատված տեխնիկական առաջադրանքի, որը կազմվել է Օրհուս կենտրոնների Ճանապարհային քարտեզի հիման վրա և համաձայնեցվել է «Բլեջան» ՀԿ և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի միջև ստորագրված պայմանագրով:

- ✓ Ընդհանուր առմամբ հաշվետու ժամանակահատվածում Վանաձորի Օրհուս կենտրոնը միայնակ կամ այլ կազմակերպությունների հետ համագործակցությամբ իրականացրել են 23 միջոցառում, այդ թվում տեղեկատվության մատչելիության ուղղությամբ 14 միջոցառում, հասարակության մասնակցության ուղղությամբ 21, արդարադատության մատչելիության ուղղությամբ 0 ու էկոկրթությանն ուղղված 17 միջոցառում, նախաձեռնել է 3 հասարակական քննարկում, մասնակցել 0 հասարակական լսման, որոնց մասնակցեմ են ընդհանուր թվով 316 մարդ, որից 145 տղամարդ և 171 կին, քննարկվող հարցերի կամ նախագծերի մասին տարածել հնարավոր ձեռքբերված տեղեկատվությունը: Ընդհանուր առմամբ տարածք է տրամադրվել 4 անգամ տարբեր քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների: /Կից ֆայլով կարող եք տեսնել Վանաձորի Օրհուս կենտրոնի վիճակագրական հաշվետվությունն ավելի մանրամասն: Հաշվետվության հավելվածում ներկայացված է մանրամասն տեղեկատվություն Վանաձորի Օրհուս կենտրոնի կողմից Օրհուս կենտրոնների Ճանապարհային քարտեզի կետերի ուղղությամբ իրականացված գործունեության տվյալներ/:
- ✓ կենտրոնի դերի բարձրացումը, էկոկրթությանը աջակցությունը, հասարակության կողմից էկոլոգիական տեղեկատվության, էկոկրթության, կենտրոնի կողմից մատուցվող ծառայությունների նկատմամբ պահանջարկի բավարարումը, Վանաձորի Օրհուս կենտրոնի պահանջվածության բարձրացումը:

- ✓ իրականացվել է աշխատանք համագործակցող հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնման և խորացման ուղղությամբ: Կենտրոնում առկա տեղեկատվությունը ավելացել է:
- ✓ Վանաձորի Օրհուս կենտրոնի համակարգողը մասնակցել է համայնքային և մարզային նշանակություն ունեցող բազմաթիվ աշխատանքային հանդիպումների, քննարկումների: Նպատակն է ապահովել կենտրոնի շարունակական արդյունավետ աշխատանքը, նոր համագործակցություն, կենտրոնի կողմից իրականացվող աշխատանքների և ծառայությունների ավելի մատչելի և արդյունավետ դարձնելը:
- ✓ Վանաձորի Օրհուս կենտրոնը մասնակցել է բոլոր Օրհուս կենտրոնների համակարգողների, փորձագետների և Էկոդաշինքի անդամների հետ համատեղ կազմակերպված իրազեկման սեմինարքննարկմանը շրջակա միջավայրի խնդիրների և ոլորտին առնչվող կարևոր որոշումների կայացման ընթացակարգերի վերաբերյալ, մասնավորապես. ՇՄԱԳՓ օրենքի նախագծի, հանքաարդյունաբերության ոլորտի կարգավորման վերաբերյալ:
- ✓ Պատրաստել է տեղեկատվական թերթիկ, որը հետագայում կտրամադրվի համապատասխան մարմիններին,
 - ✓ Առկա բնապահպանական տեղեկատվությունը տարածվել է էլեկտրոնային միջոցներով (Օրհուս կենտրոնների կայք www.aarhus.am, էլեկտրոնային փոստ, Ֆեյսբուք, Ֆեյսբուքյան ECO LORI խումբ, Google+ ցանց, YouTube): Տարածվել են բազմաթիվ հոդվածներ, կայքերի նյութեր, նախագծերի վերաբերյալ հայտարարություններ: Տեղի ԶԼՄ –ներին հարցազրույց է տրվել՝ Լոռու մարզի անտառների ներկա վիճակի և հիմնախնդիրների վերաբերյալ: Այսպիսով հունվար-հունիս ամիսներին աջակցություն է ցուցաբերվել բնապահպանական տեղեկատվության տարածմանը և հանրության լայն շրջանների իրազեկության մակարդակի բարձրացմանը: Շրջակա միջավայրին առնչվող 5 տեղեկատվական հարցումներ են իրականացվել: Ստացվել են դրանցից 3-ի պատասխանները: Մանրամասն՝ http://aarhus.am/?page_id=132 : Բանավոր դիմումներով բազմաթիվ հարցումներ են իրականացվել և ստացվել պատասխաններ: Ստացված տեղեկատվությունը տարածվել է սոցիալական ցանցերի միջոցով և տրամադրվել է սոցիալական ցանցերով:
 - ✓ Կազմակերպվել են հասարակական քննարկումներ աղետների ռիսկերի նվազեցման, քաղաքի կանաչապատման, տեղեկատվության մատչելիության և որոշումների ընդունման գործընթացի արդյունավետության բարձրացման, անտառներում ապօրինի հատումների նվազեցման և անտառային էկոհամակարգերի պահպանության և այլ թեմաներով: Վանաձորի Օրհուս կենտրոնը հարթակ է ծառայում այլ

կազմակերպությունների համար՝ բնապահպանական բնույթի տարբեր խորհրդատվությունների, բանակցությունների և դասընթացների կազմակերպման համար: Վանաձորի Օրհուս կենտրոնը գործուն դեր է կատարել դրանց կազմակերպման և անցկացման համար:

- ✓ Վանաձորի Օրհուս կենտրոնը մշտապես հետևել է կայքում տեղադրվող հայտարարություններին: Առաջարկություն է կատարվել կայքում տեղադրված հայտարարություններում կատարված անճշտության վերացման ուղղությամբ, որն ընդունվել է և կարճ ժամանակահատվածում վրիպումները վերացվել են:
- ✓ Կենտրոնի կողմից մշտապես կարևորվում է որոշումների ընդունմանը մասնակցության գործընթացը: Հետաքրքրված և ակտիվ հանրությանը խորհրդատվություն և տեղեկատվական աջակցություն է իրականացվել որոշումների ընդունմանը մասնակցության ընթացակարգերի և դրանց մասնակցության հնարավորությունների վերաբերյալ:
- ✓ ՎՕԿ-ի մասնակցել է միջազգային կառույցների և հասարակական կազմակերպությունների կազմակերպած միջազգային սեմինարների, պրեզենտացիաների և քննարկումների:
- ✓ Վանաձորի Օրհուս կենտրոնը եռամսյակային հաշվետվություններ է ներկայացրել ծրագրի ղեկավարին: Փորձագետների խորհրդին հաշվետվություններ են ներկայացվել էլեկտրոնային եղանակով:
- ✓ Ութամյա աշխատանքի արդյունքում Վանաձորի Օրհուս կենտրոնը կատարելագործել է իր հմտությունները, այժմ այն հանդիսանում է նաև տեղեկատվության սկզբնաղբյուր՝ արտադրելով որակյալ, հավաստի և հիմնավորված էկոլոգիական տեղեկատվություն:

Վանաձորի Օրհուս կենտրոնի համակարգող

Պերճ Բոջուկյան

Վանաձորի Օրհուս կենտրոնի գործունեության համապատասխանությունը Օրհուս կենտրոնների ճանապարհային քարտեզին


§ 1.1. ուսուցողական սեմինարների, իրազեկման միջոցառումների կազմակերպում՝ շրջակա միջավայրի վերաբերյալ կարևոր որոշումներ կայացնելու գործում պատասխանատու անձանց, ՀԿ-ների, այլ շահագրգիռ կողմերի համար:	21
§ 2. 1 տեղեկատվական գործունեության իրականացում, պաշտոնատար անձանց իրազեկման բարձրացման ուղղությամբ միջոցառումների կազմակերպում: /ուղված ոչ միայն ԲՆ-ին, այլև մյուս ճյուղային նախարարություններին և պետական մարմիններին:	9
§2. 2. առանձնահատուկ ուշադրություն մարզային և տեղական վարչակազմի ներկայացուցիչներին:	8
§ 3. 1 . Օրհուս կենտրոններն աջակցում են բնապահպանական արդյունավետ կառավարմանը և ողջունում գործնականում այդպիսի կառավարման իրականացման ցուցադրական օրինակները:	10
§3. 2. Արդյունավետ կառավարման լավագույն փորձի տարածում:	4
§ 4. 1. տարբեր միջոցներով, եղանակներով (կայք-էջեր, տեղեկագրեր, տեղեկատվական ստենդներ և այլն) աջակցում առկա բնապահպանական տեղեկատվության տարածմանը, հասանելիությանն ու մատչելիությանը:	24
§ 4. 2. Օրհուս կենտրոնները հանդիսանում են հասարակայնության համար հասանելի ու մատչելի կենտրոններ, տեղական և ազգային բնապահպանական ինֆորմացիայի պահեստարաններ, տեղեկատվական բազաներ:	23
§4. 3 ակիտվորեն տեղեկատվության տրամադրում Օրհուսի կոնվենցիայի ինֆորմացիոն-կոորդինացիոն մեխանիզմի ազգային հանգույցին	0
§4. 4. Անհրաժեշտության դեպքում և իշխանության ազգային մարմինների որոշման համաձայն՝ Օրհուս կենտրոնները հանդես են գալիս որպես Կոնվենցիայի ինֆորմացիոն-կոորդինացիոն մեխանիզմի ազգային հանգույց:	0

<p>§ 5. 1. համապատասխան շահագրգիռ բոլոր կողմերին կապող, միավորող օղակ, հարթակ են տրամադրում մասնակցություն ապահովելու համար, կազմակերպում են հասարակական լուսմներ, սեմինարներ, բանակցություններ, միջնորդություն և այլն:</p>	5
<p>§ 5. 2. աջակցում են հասարակայնության համար խորհրդատվության կազմակերպման գործընթացին:</p>	7
<p>§ 5. 3 նպաստում են հասարակայնության մասնակցության մեթոդների և ընթացակարգերի վերաբերյալ շահագրգիռ կողմերի իրազեկման բարձրացմանը: Հասարակայնության հետ դյուրին երկխոսության կազմակերպման հմտություններ ձևավորելու վերաբերյալ կազմակերպում են սեմինարներ պետական կառույցների համար:</p>	3
<p>§6.1. ապահովում են իրավական ոլորտի մասնագետների ուսուցման կազմակերպումն ու անցկացումը՝ շրջակա միջավայրի պահպանության ոլորտի համապատասխան բազմակողմ պայմանագրերի, մասնավորապես՝ Օրհուսի կոնվենցիայի վերաբերյալ, ինչպես նաև դատական մարմինների աշխատակիցներին պարբերաբար տեղեկացնում են բնապահպանական օրենսդրության մեջ վերջին փոփոխությունների վերաբերյալ:</p>	0
<p>§ 7. 1. նպաստում են շրջակա միջավայրի պահպանության գործին քաղաքացիների առավել ակտիվ ներգրավմանը, աջակցում են որոշումների կայացման գործընթացին նրանց մասնակցությանը, առաջարկում են պետական կառավարման մարմինների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև համագործակցության արդյունավետ միջոցներ և մեխանիզմներ:</p>	17
<p>§7. 2. տարածում են տեղեկատվություն պետական մարմինների ու քաղաքացիական հասարակության գործընկերության և համագործակցության լավագույն փորձի մասին:</p>	4
<p>§7. 3. ակտիվորեն մասնակցում են ազգային զեկույցների պատրաստման, դրանց իրականացման, տարածման և կատարման հետագա քայլերին վերաբերող գործընթացներին:</p>	0
<p>§ 8.1. կազմակերպում են բնապահպանական խնդիրները լուսաբանողիջոցառումներ, մասնավորապես՝ Օրհուսի Կոնվենցիային վերաբերող հարցերի շուրջ:</p>	16

<p>§8.2. աջակցում են քաղաքացիական հասարակության կազմակերպությունների այն նախաձեռնություններին, որոնք վերաբերում են հասարակական գործունեությանը մասնակցելու և ներգրավվելու մեթոդներին. / ՀԿ-ների մասնակցություն պլանավորման և ծրագրավորման, ինչպես նաև ծրագրերի մշակման, կառավարման, մոնիտորինգի և գնահատման գործընթացներին/:</p>	7
<p>§ 9.1 Կենտրոնների գործունեության արդյունքների, կատարողականի ներկայացմանը վերաբերող աշխատանքային պլանների մշակում՝ պարբերաբար հաշվետվություն ներկայացնելու և գնահատում կատարելու համար:</p>	4
<p>§9.2. տեղեկատվություն են տարածում բնապահպանական կառավարմանն ու կայուն զարգացմանը ՀԿ-ների մասնակցության լավագույն փորձի վերաբերյալ:</p>	2
<p>§ 9.3. աջակցում և նպաստում են ՔՀԿ-ների միջև գործընկերային հարաբերությունների և համագործակցության ձևավորմանը տեղական ու ազգային մակարդակներում:</p>	13
<p>§ 10.1. Կենտրոնները աջակցում են, կամ իրենք են իրականացնում միջոցառումներ քաղաքացիների և ձեռնարկությունների ներկայացուցիչների ուսուցման և հանրային իրազեկման ուղղությամբ՝ ելնելով կայուն արտադրության և սպառման մոդելներից, ԱՍՏՌ տվյալներից:</p>	0
<p>§10.2. համագործակցում են մասնավոր սեկտորի հետ և ցուցաբերում աջակցություն այն ոլորտներում, որոնք կապված են Կոնվենցիայի կատարման հետ:</p>	0
<p>§11.1. Կենտրոնները պետք է անցկացնեն Կոնվենցիայի հիմնարար սկզբունքի՝ Հանրային մասնակցության իրականացման վերլուծություն, քննարկում և բացահայտեն այս սկզբունքի իրականացման խոչընդոտները (ֆինանսական, իրավական, մշակութային, լեզվական, գրագիտության մակարդակի և այլն):</p>	2
<p>§ 11.2. Կենտրոնները պետք է աջակցեն ՇՄԱԳ գործընթացին՝ մասնակցելով տեղեկատվության տարածմանը, անհրաժեշտության դեպքում պայմաններ ստեղծեն հանրության մասնակցության ապահովման համար:</p>	0

<p>§11.3. ակտիվ դեր խաղան ՇՄԱԳ-ի հետագա միջոցառումների ընթացքում, հնարավորության դեպքում կատարում են ծրագրի, պլանի փաստացի իրականացման մոնիթորինգ, շահագրգիռ կողմերին տրամադրում են տեղեկատվություն ՇՄԱԳ-ի իրականացման հետագա ընթացքի և արդյունքների վերաբերյալ:</p>	<p>0</p>
<p>§11. 4. աջակցում են ռազմավարական Էկոլոգիական գնահատման համակարգին (ՇՅՕ) և տեղեկատվություն են տարածում դրա իրագործման լավագույն փորձի վերաբերյալ:</p>	<p>0</p>
<p>§ 11.5. հարթակ են հանդիսանում Շրջակա միջավայրի պաշտպանությանն ու կայուն զարգացմանն ուղված տեղական ծրագրերի և գործողությունների պլանավորման և իրագործման համար:</p>	<p>18</p>
<p>§12.1. Հանրության մասնակցության լավագույն փորձի, նորարարական ձևերի և միջոցների մասին տեղեկատվության տարածում:</p>	<p>4</p>
<p>§12.2. ՀԿ-ների փոքր ծրագրերի մշակման, իրագործման, ղեկավարման աշխատանքների համակարգում և կազմակերպում:</p>	<p>5</p>
<p>§ 13.1. Տարբեր կազմակերպություններին և քաղաքացիական հասարակության առանձին անդամներին բնապահպանական իրավունքների և պարտականությունների վերաբերյալ իրավական խորհուրդատվության տրամադրման համակարգում:</p>	<p>1</p>
<p>§13.2. հանրությանը տեղեկատվության տրամադրում և ուղղորդում դատական վարույթներին վերաբերող հարցերի, որոշումների վարչական վերանայման, դատական բողոքարկման հնարավորությունների վերաբերյալ:</p>	<p>0</p>
<p>§13.3. աջակցում իրավաբան-իրավապաշտպաններին, իրավաբանների ցուցակների տրամադրում, անվճար իրավաբանական խորհրդատվության մատուցում /կատարում են իրավաբանական գրասենյակի դեր/:</p>	<p>0</p>
<p>§13.4. Շրջակա միջավայրին վերաբերող դատական որոշումների տեղեկատվական բազայի ստեղծում և տեղեկատվության տրամադրում դրա վերաբերյալ:</p>	<p>0</p>

<p>§13.5. Օժանդակում Կոնվենցիայի համապատասխանության մեխանիզմների և սկզբունքների ընկալմանն ու ընթացմանը /Բացատրական աշխատանքներ/, դատական պրակտիկայի /փորձի/ մոնիտորինգի իրականացում, մոնիտորինգի արդյունքների տարածում, հասարակությանը իրազեկում համապատասխանության հետ կապված այն դեպքերի մասին, որոնք տեղի են ունեցել իրենց երկրներում:</p>	<p>0</p>
<p>§14. 1. Օրիուս կենտրոնները տեղական և ազգային մակարդակներում համագործակցում են շրջակա միջավայրի պահպանության և կայուն զարգացման ոլորտի այլ նախաձեռնությունների կամ ծրագրերի հետ:</p>	<p>30</p>



Վիճակագրական ցանկ Վանաձորի Օրհուս կենտրոնի կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ

Հ/հ	Միջոցառման անվանումը
1	Վանաձորի Օրհուս կենտրոնի առօրյա աշխատանքի կազմակերպում՝ Կենտրոնի դռները բաց են այցելուների համար:
2	Ջինիշյան հիշատակի հիմնադրամի Վանաձորի մասնակիցների խնդրանքով խորհրդատվություն բնապահպանական երիտասարդական ծրագրի կազմմանը:
3	Էկոմիգրացիայի երևույթների ուսումնասիրություն: Մասնակցություն Բուլաչաուրիում տեՂի ունեցած հանդիպմանը:
4	Ջինիշյան հիշատակի հիմնադրամի Վանաձորի մասնակիցների խնդրանքով խորհրդատվություն բնապահպանական երիտասարդական ծրագրի կազմմանը: Գրականության տրամադրում:
5	Մասնակցություն բնապահպանական օրենսդրության բարելավման քննարկմանը և առաջարկների ներկայացում:
6	Մասնակցություն Վանաձորի ՀԱԽ (Համայնքային աշխատանքային խումբ) քննարկումներին
7	Մասնակցություն Համայնքի բյուջե թրեյնինգին
8	Վանաձորի Օրհուս կենտրոնի 2014թ-ի տարեկան աշխատանքային պլանի կազմում:
9	Աջակցություն Վանաձորի համար 4 հիմնական դպրոցի աշակերտներին էկոկրթական միջոցառում կազմակերպելու համար:
10	Էկոլուր ՇԿ-ի հետ Վահագնի 1 ՓՀԷԿ-ի ջրառի և հէկ-ի տարածքներում հիմնախնդիրների բացահայտում, սոցիոլոգիական հարցում իրականացմանը աջակցություն:
11	Մայր բնություն միջոցառում: Կենտրոնի տարածքը և տեխնիկական տրամադրվել է համար 4 հիմնական դպրոցի ուսուցիչներին և աշակերտներին՝ էկոկրթական միջոցառում կազմակերպելու համար: Տեղեկատվական և տեխնիկական աջակցություն է ցուցաբերվել համապատասխան պրեզենտացիայի ստեղծման հ

12	Պահպանենք անտառները:Դասընթաց, Ֆիլմի դիտում, քննարկում: Էկոկրթական միջոցառում
13	Վանաձորի Շողեր սոցիալական կենտրոնի խնդրանքով Երկրի օրվան նվիրված Էկոլոգիական հիդրոմոնիթորինգի անցկացում՝ Վանաձոր գետի ջրի ուսումնասիրություն: Մասնակցել են կենտրոնի շահառուները:
14	Հանդիպում համայնքի ակտիվ երիտասարդների հետ, բնապահպանական և համայնքային խնդիրների քննարկում
16	ՀՀ Լոռու մարզպետի գրությանը համապատասխան՝ Կենտրոնի աշխատանքային պլանը համապատասխանեցվել է գրության պահանջներին և տրամադրվել է ՀՀ Լոռու մարզպետարան:
17	Կենտրոնը տրամադրվել է Թոփչք ՀԿ-ին միջոցառումներ կազմակերպելու համար:
18	Մասնակցություն Վանաձորում տեխնոպարկի շինարարության հանրային քննարկման
19	Լոռու մարզում գործող ՀԷԿ-երի կողմից արտադրված էլեկտրաէներգիայի քանակի վերաբերյալ հարցում:
20	Մասնակցություն համայնքային հիմնախնդիրներին նվիրված թրեյնինգին ՀԱԽ կազմում
21	Սևանա լճի ջրբացթողման նախագծի իրազեկման հանդիպում
22	Վանաձորի ՄԻԳ հեռուստատեսությանը տրվել է հարցազրույց
23	Ջրի մոնիթորինգի իրականացում Շողեր սոցիալական կենտրոնի սաների համար
24	ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի Շրջակա միջավայր և անվտանգություն նախաձեռնության Կլիմայի փոփոխություն կոնֆերանսի մասնակցություն
25	Բնապահպանության և սոցիալական ոլորտի կապը թեմայով քննարկում և խորհրդատվություն ՀԿ-ներին:
26	Մարզում առկա բնապահպանական խնդիրների կապը տեղեկատվության մատչելիության և որոշումների ընդունմանը մասնակցության հետ թեմայով քննարկում հյ ներկայացուցիչների հետ:

27	Մասնակցություն Վրաստանում Կլիմայի փոփոխության ադապտացիա և կենսաբազմազանության պահպանություն ծրագրի արդյունքների ներկայացմանը
28	Մասնակցություն Վրաստանում Կլիմայի փոփոխության ադապտացիա և կենսաբազմազանության պահպանություն ծրագրի արդյունքների ներկայացմանը
29	Բնական և մարդածին աղետների ռիսկերի նվազեցում թրեյնինգ՝ թրեյներների համար
30	Birthright Armenia/Դեպի Հայք Հիմնադրամի կամավոր Սերաստիան Վահագն Վերներին Վանաձորի Օրհուս կենտրոնի գործունեության հետ ծանոթացում:
31	Աղետների ռիսկերի և կլիմայի փոփոխության թեմայով մրցույթի նյութերի ընդունում
32	Կենտրոնի կամավոր Սերաստիան Վերների, Մայմեխ ՀԿ-ի և Վանաձորի Օրհուս կենտրոնի կողմից համատեղ գյուղատնտեսական, սեցիալական և բնապահպանական ծրագրի մշակում և Գերմանիայի Դեսպանատանը ներկայացում::
33	Վանաձորի Գրիգորյան կենտրոնում (Օրբան) Բնապահպանության կարևորությունը դասընթացի անցկացում:
34	Այցելություն Լեռնապատ համայնք: Աշխատանքային հանդիպում համայնքի ղեկավարության հետ: Բնապահպանական խնդիրների և ծրագրի քննարկում:
35	Շրջակա միջավայրին առնչվող ծրագրերի խորհրդատվություն Մայմեխ բնապահպանական հասարակական կազմակերպությանը:
36	Հանդիպում Լոռու մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի մասնագետների հետ: Մարզում առկա բնապահպանական խնդիրների քննակում:
37	Կենտրոնի գործունեության հաշվետվություն

38	Սղետների ռիսկերի և կլիմայի փոփոխության թեմայով մրցույթի ամփոփում: Լիլիթ Նալբանդյանը Վանաձորից կմասնակցի Բուլաչատուրիի ուսումնական կենտրոնում, Վրաստան, բնապահպանական տասօրյա դասընթացներին:
39	«Բնակավայրերի ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների կառավարման գործընթացների հանրային մոնիտորինգի մեթոդները» թեմայով դասընթաց
40	Լուսանկարչության վարպետության դասընթաց Վանաձորում
41	Հանքարդյունաբերության բնապահպանական և սոցիալական հետևանքները թեմայով աշխատանքային հանդիպում Ստամբուլում, մասնակցություն